Հայաստանի Հանրապետություն
Արմավիրի Մարզ
Գրիբոյեդովի Գյուղապետարան

Республика Армения
Армавирский Марз
Муниципалитет Села
Грибоедова

N 19
10 02 2014թ

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Ա. Ղահրամանյանին

Յարգարժան պարոն Ղահրամանյան

Ի կատարումն «Իրավական ակտերի մասին» Յայաստանի Յանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 6-րդ մասի Ձեզ է ուղարկվում Յայաստանի Յանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդովի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի փետրվարի 4-ի « Յայաստանի Յանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N 61-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» N6-Ն որոշումը:

Միաժամանակ հայտնվում է, որ նշված որոշումը սահմանված կարգով ներկայացվել է Յայաստանի Յանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության:

Առդիր 55 թերթ:

Գրիբոյեդով
համայնքի ղեկավար

Վ. Գրիգորյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք N 112 9/1529-14
«10» 02 2014թ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N61 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N6-Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի փետրվարի 4-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N 61 -Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 6-Ն որոշման ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի պահանջով և 63-րդ հոդվածի պահանջի կատարմամբ. համայնքի տվյալ տարվա բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը նախորդ տարվա բյուջեի կատարման ընթացքում ծախսերի նկատմամբ վերազանցել է, որն անհրաժեշտ է բաշխել որոշման մեջ նշված ուղղություններով և դրա անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ այն ուղղված է համայնքի զարգացմանը նպաստելուն՝ բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի փետրվարի 4-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N 61 –Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» N6-Ն որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 6-Ն

« 4 » փետրվարի 2014թ — ԹԻՎ 1 ՆԻՍՏ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 61-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով,63-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Համայնքի ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդովի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի « Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեն հաստատելու մասին » N 61-Ն որոշման մեջ կատարել լրացումը՝

1) Որոշումը լրացնել նոր բովանդակությամբ 3-րդ կետ՝
« 3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 1146.0.. հազ.դրամ, որից՝ ֆոնդային բյուջե ուղղել 1146.0 հազ. դրամ և տեղաբաշխել՝
Բաժին 0 1 1 1 հոդվ. 5122-ին հատկացնել 500.0 հազ. դրամ
Բաժին 0 1 1 1 հոդվ. 5132-ին հատկացնել 100.0 հազ. դրամ
Բաժին 0 1 6 1 հոդվ. 5113-ին հատկացնել 250.0 հազ. դրամ
Բաժին 0 1 6 1 հոդվ. 5133-ին հատկացնել 296.0 հազ. դրամ:»:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Ա. Արզումանյան | ............ | .................... | .................... |

Ա. Յպղուբյան .................... .................... ....................

Ա. Գրիգորյան .................... .................... ....................

Գ. Թեմուրյան .................... .................... ....................

Հ. Միրզախանյան .................... .................... ....................

Ս. Նազարյան .................... .................... ....................

Գ. Գրիգորյան .................... .................... ....................

Համայնքի ղեկավար [illegible]. Գրիգորյան

2014 թվականի փետրվարի 4
գ. Գրիբոյեդով